ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակում №151/GArm/20_4.3_135/15.05.20 ծածկագրով իրականացված «Համակարգիչների և համակարգիչների հարակից սարքավորումների ձեռքբերման» բաց առաջարկների հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2021

## «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

**<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը</u>՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

**<u>Մոնիթորինգի օբյեկտը</u>՝** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ:

**<u>Մոնիթորինգի առարկան</u>՝** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

**<u>Մոնիթորինգի նպատակը</u>՝** Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

**<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը</u>՝** 2020 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2021 թվականի հունվարի 29-ը:

**<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը</u>՝** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

**«Համակարգիչների (1-ին չափաբաժին) և համակարգիչների հարակից սարքավորումների (2-րդ չափաբաժին) ձեռքբերման» բաց առաջարկների հարցում**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 2020 թվականի գնումների պլանի հիման վրա և համաձայն 2020 թվականի մայիսի 15-ի №151/GArm/20_4.3_135/15.05.20 ծածկագրով բաց առաջարկների հարցման հանձնաժողովի որոշմամբ հաստատված հրավերի՝ 2020 թվականի մայիսի 18-ին բաց առաջարկների հարցումով հայտարարել է «Համակարգիչների (1-ին չափաբաժին) և համակարգիչների հարակից սարքա-վորումների (2-րդ չափաբաժին) ձեռքբերման» մրցույթ: Մրցութային հայտերի ներկայացման ժամկետը սահմանվել է մինչև 2020 թվականի մայիսի 27-ը, ապրանքների մատակարարման առավելագույն ժամկետը՝ պայմանագրի կնքման օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 30-ը, պայմանագրի առավելագույն գինը 1-ին չափաբաժնի մասով՝ 97,74 մլն ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 47,31 մլն ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

Մրցույթի անցկացման նպատակով 2020 թվականի մայիսի 18-ին Ընկերությունը «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում՝ www.procurement.am (Տեղեկագիր) և իր պաշտոնական կայքում հրապարակել է մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը և հրավերը:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին 1-ին չափաբաժնի մասով համապատասխան կարգով հայտ են ներկայացրել 3 մասնակից նշված ընդհանուր գնային առաջարկներով՝ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն (113,49 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն), «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն (103,038 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն), «Դոքս Քոմփյուտր» ՍՊԸ-ն (109,99 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն), իսկ 2-րդ չափաբաժնի մասով համապատասխան կարգով հայտ են ներկայացրել 2 մասնակից հետևյալ ընդհանուր գնային առաջարկներով՝ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն (55,055 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն) և «Դոքս Քոմփյուտր» ՍՊԸ-ն (50,1 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն):

1-ին և 2-րդ չափաբաժինների մասով լավագույն գնային առաջարկ ներկայացրած ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

| № | Ապրանքի անվանումը | Քա-նակը հատ | Միավորի առավե-լագույն արժեք ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) | Ընդհանուր առավելագույն արժեքը դրամ (ներառյալ ԱԱՀ) | «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ –ի կողմից առաջարկվող արժեքը դրամ (ներառյալ ԱԱՀ) | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միավորի | ընդհանուրի |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1-ին չափաբաժին** | | | | | | |
| 1 | Настольные ПК Lenovo կամ համարժեք Mini Tower, Intel Core i5 9500 3Ghz, 6 cores, DDR4 2666Mhz 8GB, 240GB SSD SATA 3, 2.5", Read, Write up to 500MB/s + 500GB HDD 7200Rpm, 3.5", Встроена в системную плату, 5 usb մուտք (ոչ պակաս 2 x usb3), VGA/DVI/DP/HDMI, DVD-RW, USB keyboard LAT/RUS, Usb optical mouse, Ձայնային քարտ – Встроена в системную плату,Ցանցային քարտ – Встроена в системную плату (1Gb/s),Հոսանքի սնուցման սարք – ոչ պակաս 500W,Մոնիտոր – 22", IPS, 1080x1920FHD, VGA, HDMI, DVI, Օպերացիոն համակարգ – Windows 10 Pro | 130 | 627 290.5 | 81 547 764.48 | 535 000 | 69 550 000 |
| 2 | Ноутбуки Lenovo կամ համարժեք<br>Պրոցեսորի տեսակ՝ Intel Core i5 8th Generation<br>Օպերատիվ հիշողություն՝ DDR4 8GB<br>Հիշողություն – SSD 512GB, Read,write up to 500MB/s<br>Ձայնային քարտ – Встроена в системную плату<br>Ցանցային քարտ – Встроена в системную плату (1Gb/s)<br>Հոսանքի սնուցման սարք – ոչ պակաս 500W<br>Մոնիտոր – 15"<br>Գրաֆիկական քարտ – Встроена в системную плату<br>Մուտքեր – ոչ պակաս 3 usb մուտք,որից 1 մուտքը՝ usb3 VGA/DVI/DP/HDMI<br>Դիսկակիր – DVD-RW<br>Մարտկոց – Li-ion աշխատանքային ժամանակը առանց լիցքավորման ոչ պակաս 3 ժամ<br>Օպերացիոն համակարգ – Windows 10 Pro | 48 | 528 331.78 | 25 359 925.25 | 500 800 | 24 038 400 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | Lenovo all-in-one կամ համարժեք<br>Պրոցեսոր – Intel Core i5 9Gen<br>Օպերատիվ հիշողության սարք – DDR4 2666Mhz 8GB<br>Հիշողություն – 120GB SSD + 1000GB HDD<br>Գրաֆիկական քարտ – Встроена в системную плату<br>Մուտքեր – 5 usb մուտք (ոչ պակաս 2 x usb3), VGA/DVI/DP/HDMI<br>Դիսկակիր – DVD-RW<br>Ստեղնաշար – keyboard LAT/RUS<br>Մուկ – optical mouse<br>Ձայնային քարտ – Встроена в системную плату<br>Ցանցային քարտ – Встроена в системную плату (1Gb/s)<br>Մոնիտոր – 23.8"FHD IPS WLED Backlight 1920x1080<br>Օպերացիոն համակարգ – Windows 10 Pro | 15 | 692 701.63 | 10 390 524.48 | 630 000 | 9 450 000 |
| **Ընդամենը** | | | | | | **103 038 400** |

| № | Անվանումը | Քա-նակ հատ | Միավորի առավե-լագույն արժեք ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) | Ընդհանուր առավելա-գույն արժեքը ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) | «Դոքս Քոմփյուտր» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արժեքը դրամ (ներառյալ ԱԱՀ) | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միավորի | ընդհանուրի |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **2-րդ չափաբաժին** | | | | | | |
| 1 | Многофункциональное устройствоHP LaserJet Pro MFP M227SDN կամ համարժեք | 113 | 176951.04 | 19995467.52 | 151 000 | 17 063 000 |
| 2 | Принтер HP Color LaserJet E75245 կամ համարժեք | 2 | 1593379.2 | 3186758.4 | 1 450 000 | 2 900 000 |
| 3 | Многофункциональное устройство HP LaserJet Pro M435nw կամ համարժեք | 1 | 577454 | 577454 | 380 000 | 380 000 |
| 4 | Многофункциональное устройство HP Officejet 252 կամ համարժեք | 1 | 268356.48 | 268356.48 | 190 000 | 190 000 |
| 5 | Принтеры HP LaserJet Pro M102A կամ համարժեք | 102 | 51995.328 | 5303523.46 | 51 700 | 5 273 400 |
| 6 | Принтеры HP LaserJet Pro M254DW կամ համարժեք | 2 | 199597.44 | 399194.88 | 180 000 | 360 000 |
| 7 | Принтеры HP Designejet T120 կամ համարժեք | 1 | 758956.8 | 758956.8 | 463 000 | 463 000 |
| 8 | SSD накопитель SSD / SATAIII / 2.5" / TLC NAND /Read up to 550Mb/s /, Write up to 500Mb/s | 50 | 56185.92 | 2809296 | 30 000 | 1 500 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | /100x69.9x7mm կամ համարժեք | | | | | |
| 9 | Внешний жесткий диск 1TB / HDD / USB 3.0 / 5400rpm / 2.5 " / Max read speed:110 MB/s / Max write speed: 105 MB/s կամ համարժեք | 18 | 33546.24 | 603832.32 | 30 000 | 540 000 |
| 1<br>0 | Жесткий диск 1TB / Internal HDD / SATAIII / 2.5" / 128MB Cache / 7200RPM / Reading speed up to 6Gb/s / Write speed up to 6Gb/s / 100.35x 70x7 mm կամ համարժեք | 2 | 28512.96 | 57025.92 | 28 000 | 56 000 |
| 11 | Блок питания 500W / Form factor: ATX / Mainboard connector: 20 + 4 pin / CPU Connectors : 1x 4 + 4 pin / Number of 15-pin SATA Connectors: 2 / Number of 4-pin Molex Connectors: 2 / Fan Dimensions: 140x140 mm /150x85x160mm կամ համարժեք | 9 | 20966.4 | 188697.6 | 19 000 | 171 000 |
| 12 | ОЗУ для автоматизированных рабочих мест ОЗУ DDR3 1600MHz 4GB կամ համարժեք | 6 | 20966.4 | 125798.4 | 16 000 | 96 000 |
| 13 | ОЗУ для автоматизированных рабочих мест ОЗУ DDR4 2400MHz 8GB կամ համարժեք | 4 | 33546.24 | 134184.96 | 25 200 | 100 800 |
| 14 | ОЗУ для автоматизированных рабочих мест ОЗУ DDR4 2133MHz 8GB կամ համարժեք | 1 | 33546.24 | 33546.24 | 25 000 | 25 000 |
| 15 | ОЗУ для автоматизированных рабочих мест ОЗУ DDR3 1600MHz 8GB կամ համարժեք | 2 | 25159.68 | 50319.36 | 24 000 | 48 000 |
| 16 | Источник Бесперебойного питания ИБП Входное/ Выходное напряжение - 170/280В<br>Максимальная расширяемая выходная мощность - 1000ВА/600ВТ<br>Время работы при полной нагрузке - 20мин.<br>Тип - интерактивный կամ համարժեք | 280 | 32706.24 | 9157747.2 | 31 000 | 8 680 000 |
| 17 | USB носитель 16GB / USB 2.0 / 130MBs read կամ համարժեք | 22 | 4193.28 | 92252.16 | 4 000 | 88 000 |
| 18 | Монитор 22”, IPS, 1080x1920FHD, VGA, HDMI կամ համարժեք | 25 | 75479.04 | 1886976 | 68 200 | 1 705 000 |
| 19 | Клавиатура USB keyboard LAT/RUS, | 23 | 4193.28 | 96445.44 | 4 050 | 93 150 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20 | Компьютерная мышь Usb optical mouse | 8 | 4193.28 | 33546.24 | 4 050 | 32 400 |
| 21 | Видеоадаптер ASUS EN8500GT/HTP կամ համարժեք | 1 | 52416 | 52416 | 50 000 | 50 000 |
| 22 | Жесткий диск для сервера Western Digital WD5000AAKX, կամ համարժեք | 2 | 30240 | 60480 | 30 000 | 60 000 |
| 23 | Блок питания для сервера DELTA ELECTRONICS DPS–350 UB A կամ համարժեք | 3 | 74880 | 224640 | 70 000 | 210 000 |
| 24 | Блок питания для автоматизированных рабочих мест Dell GmbH 375W, 100-120/200-240 VAC, L375P-00 p/n:KH624 կամ համարժեք | 8 | 77520 | 310080 | 75 000 | 600 000 |
| 26 | Носитель CD Носитель CD | 55 | 161.28 | 8870.4 | 110 | 6 050 |
| 27 | Носитель DVD Носитель DVD | 37 | 161.28 | 5967.36 | 125 | 4 625 |
| 28 | Фотобарабан (Копи-картридж /Драм-картридж) монохромный марки "101R00432 Drum" для Xerox Work Centre WC5020 101R00432 Drum կամ համարժեք | 2 | 95219.71 | 190439.42 | 92 000 | 184 000 |
| 29 | Тонер-картридж (тубы) черный (двойная упаковка: в 1 упаковке - 2 шт. тубы) марки "Xerox 106R01277 Toner" для Xerox Work Centre WC5020 կամ համարժեք | 8 | 26482.068 | 211856.54 | 25 400 | 203 200 |
| 30 | Фотобарабан (Копи-картридж /Драм-картридж) монохромный марки "Xerox 013R00589" для Xerox Copy Centre C118 կամ համարժեք | 1 | 122476.48 | 122476.48 | 115 000 | 115 000 |
| 31 | Тонер-картридж черный марки "Xerox 006R01179" для Xerox Copy Centre C118 կամ համարժեք | 2 | 41931.995 | 83863.99 | 38 000 | 76 000 |
| 32 | Драм-картридж черный марки "Xerox 013R00591" для Xerox Work Centre WC5335 կամ համարժեք | 3 | 105352.87 | 316058.62 | 103 000 | 309 000 |
| 33 | Тонер-картридж черный марки "Xerox 006R01160" для Xerox Work CentreWC5335 կամ համարժեք | 6 | 31517.052 | 189102.31 | 30 800 | 184 800 |
| 34 | Картридж с тонером черный марки "HP LJ-16A" (HP Laser Jet Q7516A) для лаерных принтеров կամ համարժեք | 2 | 142172.46 | 284344.92 | 140 000 | 280 000 |
| 35 | Картридж с тонером черный марки Canon 725 для лаерных принтеров Canon կամ | 2 | 30000 | 60000 | 29 500 | 59 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համարժեք | | | | | |
| 36 | Картридж с тонером черный марки "Xerox 013R00621" для Xerox Work Centre PE220 կամ համարժեք | 4 | 37527.84 | 150111.36 | 37 000 | 148 000 |
| 37 | Картридж с тонером черный марки "HP LJ-17A" для лаерных принтеров HP LJ M102A կամ համարժեք | 1 | 42670.55 | 42670.55 | 41 500 | 41 500 |
| 38 | Картридж с тонером черный марки "HP LJ-05A" для лаерных принтеров HP LJ P2055DN կամ համարժեք | 1 | 58346.2 | 58346.2 | 57 500 | 57 500 |
| 39 | PC Smart-UPS ,SRT 3000VA 230V, SRT3000XLI կամ համարժեք | 1 | 2892334.50 | 2892334.50 | 2 550 000 | 2 550 000 |
| 40 | Цветное многофункциональное устройство формата А3 ALC8045_TT կամ համարժեք | 1 | 5443096.00 | 5443096.00 | 5 200 000 | 5 200 000 |
| ***Ընդամենը*** | | ***812*** | | ***56776614.03*** | | ***50 103 425*** |

Մասնակիցների հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել են մրցութային պայմաններին բավարար:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 2020 թվականի հունիսի 5-ի նիստի №3 արձանագրությամբ 1-ին չափաբաժնի մասով հաղթող է ճանաչել «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Դոքս Քոմփյուտր» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված բաց առաջարկների հարցման հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Հաղթողի ընտրությունը կատարվել է հաղթողի ընտրության գնահատման աղյուսակի հիման վրա՝ յոթ չափանիշներով՝ սահմանված կարգին համապատասխան հայտի կազմում և ներկայացում, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերի առկայություն, տեխնիկական համապատասխանություն, ընդհանուր արժեք, մասնագիտական գործունեության համապատասխանություն, նախորդ 3 տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալ, ֆինան-սական միջոցների առկայություն:

Ընկերության և «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի միջև 1-ին չափաբաժնի մասով 2020 թվականի հուլիսի 2-ին կնքվել է պայմանագիր՝ 103 038 400 ՀՀ դրամ՝ ներառյալ

ԱԱՀ, արժեքով: Պայմանագրի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

Ընկերության և «Դոքս Քոմփյութր» ՍՊԸ-ի միջև 2-րդ չափաբաժնի մասով 2020 թվականի հուլիսի 3-ին կնքվել է պայմանագիր՝ 50 103 425 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ, արժեքով: Պայմանագրի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

№151/GArm/20_4.3_135/15.05.20 ծածկագրով իրականացված «Համակարգիչների (1-ին չափաբաժին) և համակարգիչների հարակից սարքավորումների (2-րդ չափաբաժին) ձեռքբերման» բաց առաջարկների հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. 2020 թվականի մայիսի 18-ին Ընկերությունը Տեղեկագրում և իր պաշտոնական կայքում հրապարակել է մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը և հրավերը: Հայտերի ներկայացման համար տրվել է 7 աշխատանքային օր: Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը Տեղեկագրում և Ընկերության պաշտոնական կայքում ևս հրապարակված է:
2. Ընկերությունը գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկայի բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
3. Նախքան մրցույթի հայտարարումը, Ընկերությունը 3 ընկերությունների, շրջանակում կատարել է գնային առաջարկների հարցում՝ շուկայի ուսումնասիրություն:
4. Հաղթող են ճանաչվել հրավերի պահանջները բավարարող մասնակիցները:
5. Պայմանագրերով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:
6. Պայմանագրերը կատարման ընթացքում են:

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

**Ընկերության անվանումը** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Գնման անվանումը** «Համակարգիչների (1-ին չափաբաժին) և համակարգիչների հարակից սարքավորումների (2-րդ չափաբաժին) ձեռքբերում»

**Գնման ծածկագիրը** №151/GArm/20_4.3_135/15.05.20

**Գնման ձևը** Բաց առաջարկների հարցում

## ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել | ☑ | ☐ | ☐ | |

## ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 2 | Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը | ☑ | ☐ | ☐ | |
| 3 | Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել | ☑ | ☐ | ☐ | |
| 4 | Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են) | ☑ | ☐ | ☐ | |

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 5 | Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար | ☐ | ☑ | ☐ | |

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 6 | Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար | ☑ | ☐ | ☐ | |
| 7 | Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը | ☐ | ☑ | ☐ | |
| 8 | Գնումն օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է | ☑ | ☐ | ☐ | |
| 9 | Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը | ☑ | ☐ | ☐ | |
| 10 | Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը | ☑ | ☐ | ☐ | |
| 11 | Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը | ☑ | ☐ | ☐ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի | ☐ | ☑ | ☐ | |

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿՆՔՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 13 | Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ | ☑ | ☐ | ☐ | |
| 14 | Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին | ☑ | ☐ | ☐ | |
| 15 | Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը | ☑ | ☐ | ☐ | |
| 16 | Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը) | ☑ | ☐ | ☐ | |

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 17 | Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ | ☑ | ☐ | ☐ | |
| 18 | Գնմանպայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով | ☐ | ☐ | ☑ | Պայմանագիրը կատարման ընթացքում է: |
| 19 | Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին | ☑ | ☐ | ☐ | |